

# Հայաստանի համայնքների միության Հանրապետական խորհրդի կին անդամների ընտրության ընթացակարգը

## Կանոնադրության համապատասխան դրույթները

12.1.5 Միության անդամ համայնքի կին ղեկավարները՝ փակ, գաղտնի քվեարկությամբ, առաջադրում են Միության Հանրապետական խորհրդի անդամ համայնքների երեք կին ղեկավարների թեկնածուներ:

### 1. Ընտրության կազմակերպումը

Հանրապետական խորհրդի կին անդամների ընտրության պատշաճ կազմակերպման համար պատասխանատու է գործադիր տնօրենը<sup>1</sup>:

### 2. Թեկնածությունների առաջադրման հայտարարություն

- ՀՀՄ-ի անդամների հաջորդ հերթական Ընդհանուր ժողովից առնվազն 25 օր առաջ Միության աշխատակազմը անդամ համայնքների բոլոր կին ղեկավարներին ուղարկում է նամակ (փոստային և էլեկտրոնային տարբերակով)՝
  - i. տեղեկացնելով Ընդհանուր ժողովի ամսաթվի և Հանրապետական խորհրդի կին անդամների ընտրության կազմակերպման մասին<sup>2</sup>,
  - ii. առաջարկելով Միության կին անդամներին թեկնածություն առաջադրել հանրապետական խորհրդի կազմում ընտրվելու համար,
  - iii. սահմանելով թեկնածությունների առաջադրման վերջնաժամկետ և տրամադրելով թեկնածությունների ներկայացման հասցե (փոստային և էլեկտրոնային):
- Առաջադրված անձը պետք է լինի համայնքի կին ղեկավար: Առաջադրողը նույնպես պետք է լինի կին ղեկավար:
- Թեկնածությունների առաջադրման հայտերը ստանալուց հետո Միության աշխատակազմը պետք է կապ հաստատի բոլոր առաջադրված անձանց հետ (սա չի վերաբերվում ինքնաառաջադրման դեպքերին)՝ տեղեկացնելու համար, որ նրանց թեկնածությունն առաջադրվել է և ճշտելու ընտրություններին մասնակցելու վերջիններիս ցանկությունը:
- Յուրաքանչյուր համայնքի կին ղեկավար կարող է ընդգրկվել ինչպես իր հանրապետական խորհրդի ընտրությունների իր մարզի նախընտրական ցուցակում, այնպես էլ համաձայն Կանոնադրության 12.1.5 հոդվածի՝ միայն համայնքի կին ղեկավարների համար նախատեսված ցուցակում:

### 3. Ընտրությունների կազմակերպումը

- Ընդհանուր ժողովի գումարումից առնվազն 3 աշխատանքային օր առաջ Միության աշխատակազմը Միության բոլոր անդամ համայնքների կին ղեկավարներին էլեկտրոնային փոստով ուղարկում է առաջադրված կին թեկնածուների անունները: Առաջադրված թեկնածուների ցանկը տեղադրվում է նաև միության Ինտրանետում:
- Հանրապետական խորհրդի կազմում համայնքի կին ղեկավարների ընտրությունը տեղի է ունենում Ընդհանուր ժողովի ընթացքում: Ընտրության ժամը հայտարարվում է Ընդհանուր ժողովի ժամանակ:
- Եթե Հանրապետական խորհրդի կազմում ընտրվելու համար առաջադրվել է միայն 3 կին, այդ դեպքում բոլոր առաջադրված թեկնածուները համարվում են ընտրված:

<sup>1</sup> Եթե գործադիր տնօրենն այս գործընթացին առնչվող հնարավոր ֆինանսական կամ անձնական շահ ունի, ապա պետք է նախօրոք հայտնի այդ մասին, և Վարչությունը պետք է պատվիրակի ընտրության կազմակերպման գործառույթը որևէ անկախ անձի:

<sup>2</sup> Հանրապետական խորհրդում այս տեղերը համարվում են լրացուցիչ, կանայք կարող են նաև մասնակցել հանրապետական խորհրդի ընտրությունների՝ ն բոլոր անդամների համար նախատեսված կարգով:

- Եթե առաջադրված կին թեկնածուների թիվը սահմանված 3-ից պակաս է, ապա Ընդհանուր ժողովին մասնակցող բոլոր համայնքի կին ղեկավարները միաձայն համաձայնության միջոցով իրենց կազմից կարող են առաջադրել համապատասխան թվով թեկնածուներ (վերջիններիս համաձայնության դեպքում): Այս կարգով առաջադրված թեկնածուների անունները ևս պետք է ավելացվեն համայնքի կին ղեկավարների ընտրության համար նախատեսված քվեաթերթիկի մեջ:
- Եթե առաջադրված կին թեկնածուների թիվը գերազանցում է 3-ը, ապա նրանց ընտրությունն անց է կացվում փակ, գաղտնի քվեարկությամբ: Ընդհանուր ժողովին ներկա համայնքների բոլոր կին ղեկավարները կարող են մասնակցել Հանրապետական խորհում կին ներկայացուցիչների ընտրությանը: Յուրաքանչյուր համայնքի կին ղեկավար կարող է քվեարկել միայն մեկ թեկնածուի օգտին: Բոլոր քվեարկող անդամների քվեները հավասարազոր են:
- Քվեարկությունից առաջ յուրաքանչյուր համայնքի կին ղեկավարի աշխատակազմի կողմից տրվում է բոլոր կին թեկնածուների և նրանց ներկայացրած համայնքների անունները պարունակող մեկ քվեաթերթիկ: Քվեաթերթիկ ստացած յուրաքանչյուր անդամ պետք է ստորագրի իր անվան դիմաց և քվեաթերթիկը գցի Հանրապետական խորհրդի կազմում կին համայնքի ղեկավարների ընտրության համար նախատեսված համապատասխան քվեատուփի մեջ: Անդամներին տրվող քվեաթերթիկների թիվը պետք է արձանագրվի և քվեարկության ավարտին համեմատվի քվեարկությանը մասնակցած անդամների թվի հետ:
- Քվեարկության արդյունքները հաշվում և ամփոփում է գործադիր տնօրենի կողմից նշանակված փորձառու, անկախ անձանցից բաղկացած ընտրական հանձնաժողովը: Թեկնածուներից յուրաքանչյուրը, ինչպես նաև գործադիր տնօրենը, կարող են ունենալ քվեարկության ընթացքին և քվեաթերթիկների հաշվման գործընթացին հետևող դիտորդներ:
- Համայնքի կին ղեկավարների ընտրության արդյունքների ամփոփումը կատարվում է Միության հանրապետական խորհրդի գյուղական համայնքների ներկայացուցիչների ընտրության արդյունքների ամփոփումից անմիջապես հետո:
- Ամենաշատ ձայները ստացած 3 թեկնածուները համարվում են ընտրված: Եթե Միության Հանրապետական խորհրդի կին ղեկավարների ընտրության ցուցակում ներառված թեկնածուները Հանրապետական խորհրդի կազմում ընտրվում են յուրաքանչյուր մարզի գյուղական համայնքների ներկայացուցիչների ընտրության արդյունքում, ապա նրանց թեկնածությունն այլևս հաշվի չի առնվում կին ղեկավարների ընտրության արդյունքներն ամփոփելիս:
- Ընտրական հանձնաժողովը ընտրությունների արդյունքների մասին տեղեկացնում է Միության գործադիր տնօրենին: Գործադիր կազմում է Հանրապետական խորհրդի կազմում ընտրված համայնքի կին ղեկավարների ցուցակ՝ նշելով անդամների անուն ազգանունը և համայնքի անվանումը: Ընդհանուր ժողովի նախագահողն այնուհետև հայտնում է ժողովի մասնակիցներին կին անդամների ընտրությունների արդյունքները՝ կարդալով ընտրված համայնքների ղեկավարների անունները:
- Այն դեպքում, երբ երկու թեկնածուներ հավաքում են հավասար քանակությամբ քվեներ, ընտրական հանձնաժողովի ադմինիստրատորները պետք է գրեն երկու թեկնածուների անունները առանձին, նույն չափի թղթերի վրա, դրանք տեղադրեն տուփի մեջ և փոխանցեն Ընդհանուր ժողովի նախագահողին: Վերջինս առանց նայելու պետք է վերցնի թղթերից մեկը և հայտնի դրա վրա գրված թեկնածուի անունը որպես ընտրված նախագահ: